

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2014թ. 1-ԻՆ ԿԻՄԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### . ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2014 թվականի առաջին կիսամյակում զգալի աշխատանքներ են իրականացվել սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններում փաստագրվել են	1619 ընտանիքներ
Եղեգնաձորի տարածաշրջան	1093 ընտանիք
Վայքի տարածաշրջան	340 ընտանիք
Ջերմուկի տարածաշրջան	186 ընտանիք
Ընտանեկան նպաստի է ստացել՝	1610 ընտանիք
Սոցիալական նպաստ է ստացել՝	487 ընտանիք
Հրատապ եռամսյակային դրամական օգնություն է ստացել	192 ընտանիք
Երեխայի ծննդյան միանվագ նպաստ է ստացել	61 երեխա

Պարբերաբար իրականացվել են հարակից բազաներից ստացվող տեղեկատվությունների և տեղական տեղեկատվական բազաների համադրման, մասնագետների տնային այցելությունների միջոցով ընտանիքների սոցիալական վիճակի ուսումնասիրությունների գործառույթները, որոնք որոշակիորեն նպաստել են ընտանեկան նպաստների հասցեկանության և սպասարկման որակի բարելավմանը:

Շարունակվում է ավանդների փոխհատուցման աշխատանքները 2014թ հուլիսի 1-ի դրությամբ ավանդի փոխհատուցում է տրվել 69 քաղաքացու:

Մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոններում 2014թ. 1-ին կիսամյակում գրանցվել են 925 գործազուրկներ, աշխատանքի են տեղավորվել 194 մարդ:

Մարզում ապրում են 4199 հաշմանդամներ, որից 128 մանկուց հաշմանդամներ, 161 1-ին խմբի, 1701 2-րդ խմբի և 2209 –ը 3-րդ խմբի հաշմանդամներ են :

28 հաշմանդամի հատկացվել է առողջարանային վերականգնողական բուժման ուղեգրեր:

Մարզի երեք ՍԱՏԲ-ներում հաշվառված են 10231 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 34.3 հազ. դրամ :

ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի N 947-Ն զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքներին <<Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>> որոշմամբ բնակարանի կարիք ունեցող 40 զինծառայողների հերթացուցակը ներկայացվել է ՀՀ ՊՆ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի մոտ կայացած ընդունելության եկած 366 քաղաքացիների հատկացվել է դրամական օգնություն:

Կարևորվել է մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը, պետական նպաստների համակարգի, հաշմանդամների հիմնախնդիրների, սոցիալական պաշտպանության ոլորտի այլ իրավական ակտերի լուսաբանումը: Պարբերաբար <<Վարդաձոր>> թերթով ներկայացվել է մարզի սոցիալական ոլորտին վերաբերվող տեղեկատվությունը, հարցազրույցներ մարզպետարանի սոցիալական ոլորտի պատասխանատուների հետ:

